

C.1930/928

Ա. ՎԵՐՄԻՇՅԱՆ

ՊՏՂԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ

ՉԵՌՆԱՐԿ

Գ-ՅՈՒԴ-ՅԵՐԻՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Մ Ա Ս

ԲՈՅԱ ՕՏԵԼԻ
ԻՆՍԻՏՈՒՏԱ
ԽՈՏ-ՅՈՎԵԼՈՒԹ
Խաչատր Խաչ
Հ Հ Պ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ - 1929

634.1

Ա - Տ1

С.1930/925
30 JUL 2010

4
1474

6241

4-51

Ա. ՎԵՐՍԻԴՅԱՆ

ՊՏՂԱԲՈՒԹՈՒԹՅԱՆ

ԶԵՐՆԱՐԿ

ԳՅՈՒՂՅԵՐԻՑ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Մ Ա Ս

ՎԻՃԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԽՈՏՈԽԵԴՐԻԱ
Ակադեմիա Նույն
СССР



ՀՀ-ՀՀ ՀՀ ՀՀ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1929

09 AUG 2013

19. 9 41

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պտղաբուծություն կոչվում ե այն գիտությունը, վորն ուսումնասիրում ե ուսուցող պտուղներ, որինակ՝ խնձոր, տանձ, դեղձ, ծիրան, մորի յեզ այլն տվող ծառերն ու թփերը։ Ուսումնասիրելով պտղաբուծությունը՝ մենք սովորում ենք, թե ի՞նչպես պետք ե աճեցնել ու տնկել մատաղ ծառիկը, ի՞նչպես այն խնամել, վո՞րտեղ, ի՞նչպես յեզ ի՞նչպիսի տեսակներ բազմացնել։ Միաժամանակ ուսումնասիրում ենք պտղատու ծառերի տեսակները, իմանալու համար, թե նրանցից վո՞րն ե լավ, վո՞րն ե վատ, վո՞րը ինչի համար ե գործադրվում, վո՞րտեղ ավելի լավ կանեն յել այլն։

Մարդիկ պտղաբուծությամբ զբաղվում են շատ հին ժամանակներից։ Բազմաթիվ տեղեր անտառներում վալիք դրությամբ աճում են խնձորենին, տանձենին, բալենին, սալորենին յեզ այլն։ Հին մարդն անտառում հավաքում եր վայրի պտուղներ յեզ նրանցով սնվում։ Հետազայում նա սովորեց իր տան մոտիկ տեղում տնկել ծառեր, խնամել, գյուղից գյուղ տեղափոխել, յեզ այժմ յերկրագնդի վրա չկա մի բնակելի յերկիր, վորտեղ վորեցի պտղատու ծառ կամ թուափ չաճի։ Նույնիսկ հեռավոր ցուրտ Սիբիրում այժմ զրադշում են պտղաբուծությամբ։



55987-66

Գրառեպիար № 1711 թ. Հր. 930 Տիրաժ 3000
Դետակատի յերկրորդ տպարան Թերևանում — Պ. 200

Կան տեղեր, վորտեղ գյուղական բնակչության զիսավոր զբաղմունքը պտղաբուծությունն ե. այդ յերկրներից մեծ քանակությամբ զանազան պտուղներ են արտահանվում դեպի ուրիշ յերկրներ. Այսպես, որինակ՝ Ավստրալիայից, Ամերիկայից շատ մեծ քանակությամբ զանազան պտուղներ են փոխադրում Անգլիա, Շվեյցարիա, Նորվիեգիա, վորոնց սեփական պտուղը ին բավականագնում. Հիանալի պտղատու այզիներ կան Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում. Մեզ մոտ Միության մեջ ել կան շատ լավ պտղատու այզիներ. Առանձնապես հայտնի յեն իրենց պտուղներով Ղրիմը, Ուզբեկստանը, Տամիլ-ստանը, Անդրկովկասը:

I

ՊՃԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի բնակչությունը պտղաբուծությամբ զբաղվում ե շատ հնուց, բայց մինչև այժմ յերկրի մեծ մասում տնտեսության համար պտղաբուծությունը մեծ նշանակություն չունի:

Հայաստանում պտղատու այզիներով բոնված տարածությունն ընդամենը մոտ 5000 հեկտար է, վորից 3000-ը զուտ պտղատու այզիներ են, իսկ մնացածը ցըլած են խաղողի այզիներում, տների բակերում, գաշտերում և ալին. Մեզ մոտ պտղատու այզիները մեծ մասամբ փոքր են, մոտ $1/8 - 1/4$ հեկտար. Հազվածեալ են միքանի հեկտար տարածությամբ այզիներ. Հայաստանում մեկ հեկտար պտղատու այզուց միջին հաշվով սաացվում է մոտ 75 ցենտներ (450 ֆ.) բերք, իսկ ամբողջ յերկրում տարեկան հավաքվում է ընդամենը 3.600.000 ցենտներ բերք, վորըն արժեք մոտ 580.000 ռուբլի. Վորովհետև տնտեսությունների մեծ մասի այզիները փոքր են, և սաացվող բերքն ել քիչ է, այդ պատճառով բերքի մեծ մասը մնում է տնտեսության կարիքների համար, և շատ քիչ մասն է ծախվում. Այս մասը, վոր ծախվում է, կոչվում է ապրանքային մաս. Հայաստանի պտղաբուծության ապրանքային մասը կազմում է 35 տոկոս.

ալսինքն ծախվում ե ստացված բերքի մոտ 35 տոկոսը: Ցեթե մենք համեմատենք մյուս կուլտուրաների հետ, կտեսնենք, վոր Հայաստանում ցանքսերով բռնված ե ընդամենը մոտ 230 000 հեկտար, վորպիսի տարածությունից ստացվում են զանազան մթերքներ—ցորեն գարի, բամբակ, ընդեղեն, խոռ և ալլն, ընդամենը 30.000.000 ոռոբլի գումարի: Իսկ յեթև մենք վերցնենք այդ բոլոր մթերքների ապրանքային մասը, կտեսնենք, վոր այն արժե մոտ 9 000.000 ոռոբլի, մինչդեռ պտղաբուծության ապրանքային մասն արժե մոտ 900.000 ոռոբլի:

Ցեթե մենք հիմա հաշվենք, թե պտղատու այդիներն ապրող ապրանքության վճր տոկոսն են կազմում, և դրանից ստացվող պտուղների արժեքը մյուս բոլոր մթերքների արժեքների վճր տոկոսն ե կազմում, նաև այն, թե պտղաբուծության ապրանքային մասի արժեքն ընդհանուր մթերքների ապրանքային մասի արժեքի վճր տոկոսն ե կազմում, կզանք այն յեղբակացության, վոր թեև պտղատու այդիները համեմատաբար փոքր տարածություն են բռնում, բայց տամու են բավականին մեծ յեկամուտ:

Ասածներից պարզ ե, վոր պտղաբուծությունը ձեռնտու զբաղմունք ե Հայաստանի գյուղացիական տնտեսության համար:

Ենչպես հայտնի յեւ Հայաստանը շատ հողասակավ յերկիր ե: Սակավահող յերկրներում առանձնապես կարեւոր ե զարգացնել գյուղատնտեսության այն ձյուղերը, վորոնք տալիս են մեծ յեկամուտ: Այդ ձյուղերն են՝ բամբակագործությունը, ծիսախոտագործությունը, բանջարաբուծությունը, խաղողաբուծությունը, պտղա-

բուծությունը: Մակայն ամեն տեղ չի կարելի մշակել բամբակ, ծիսախոտ, խաղող, բանջարանոց և այլն: Մեկի համար հարկավոր ե շատ տաքություն, իսկ մյուսի համար՝ համար՝ խոնավություն, յերբորդի համար՝ հարթ տարածություն, լավ, փուլի հողեր և այլն:

Այդ ահսակեալից պտղաբուծությունն առանձնապես հարմար ճյուղ ե: Նախ պտղատու այգիների համար կարելի յէ ողտագործել թեք, անհարմար լանջերը. յերկրորդ՝ շնորհիվ պտղատու ծառերի տեսակների և փոփոխակների (օրոր) բազմազանության, միշտ ել կարելի յէ նրանցից ընտրել համարյա ամեն կլիմայի և ամեն հողի հարմար տեսակները և զցել պտղատու այգի. յերբորդ՝ պտղատու ծառերը չեն պահանջում այնքան շատ ջուր, ինչքան բամբակը, բանջարանոցները և այլն:

Այսպիսով պարզ ե, վոր Հայաստանում, վորտեղ մեկ շնչին ալնքան քէչ ե հող համառմ, վորտեղ կան շատ թեք, անհարմար, քարքարոտ հողամասեր, և միշտամանակ ջուրը չի բավականացնում, պտղաբուծությունը պետք ե առանձնապես ուժեղ կերպով զարգանաւ: Դրան պիտի ավելացնել նաև այն, վոր մեզ մոտ ստացվող պտուղներն ել լավ վորպակի յեն և կարող են արտահանվել Սիության զանազան շրջանները և նույնիսկ արտասահման:

ՀԱՐՑԵԲ ՅԵՎ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զեր անտեսության մեջ պտղատու ծառեր ունեք:

2. Այդ ծառերն առանձին այգի՝ յեն կազմում, թե գտնվում են խաղողի այգում կամ տան բակում:

3. Զեր տնտեսության մեջ ի՞նչքան տարածում է բանված պտղատու ծառերով:
4. Տնտեսությունն ընդամենը վհրքան հող ունի:
5. Պտղատու ալզին ամբողջ հողի վհր տոկոսն ե կազմում:
6. Քանի՞ տարի յե, վոր ձեր այգին գոյություն ունի:
7. Այգու բերքը ծախում եք, թե ոգտագործում եք տնտեսության մեջ:
8. Վար մասն եք ծախում:
9. Ծախում եք գյուղում, թե արտահանում եք:
10. Ո՞ւր եք արտահանում:
11. Պտուղները մթերքներով փոխանակում եք:
12. Վար մասն եք փոխանակում:
13. Ի՞նչ մթերքներով եք փոխանակում և ի՞նչ հարաբերությամբ:
14. Քանի՞ հեկտար պտղատու և խառն այգիներ գյուղում:
15. Գյուղն ընդամենը ի՞նչքան հող ունի:
16. Ամբողջ հողի վհր տոկոսն են բանում պտղատու և խառն այգիները:
17. Քանի՞ տնտեսություն այգիներ ունեն:
18. Տնտեսությունների վհր տոկոսն ունեն զուտ պտղատու այգիներ, և քանի՞սը՝ խառը:
19. Գյուղում միջին մեծության այգին վժրքան տարածություն ե բռնում:
20. Պտուղների բերքը մեծ մասամբ ծախված է, թե մնում ե տնտեսություններում:
21. Յեթե ծախվում ե, ում և վհրտեղ:
22. Զեր շրջանի վհր գյուղում կան պտղատու ալզիներ:

23. Բնդամենը քանի՞ հեկտար պտղատու ալզի կա ձեր շրջանում:

Հաշիվներով դուրս բերեք

1. Հայաստանում պտղատու ալզիներն ընդհանուր ցանքսատարածության վհր մասն են կազմում:
 2. Պտուղների արժեքն ընդհանուր ցանքսատարածությունից ստացվող մթերքների արժեքի վհր տոկոսն ե կազմում:
 3. Պտուղների ապրանքային մասի արժեքն ընդհանուր մթերքների ապրանքային մասի արժեքի վհր տոկոսն ե կազմում:
 4. Քանի՞ անգամ ձեր շրջանի մեկ հեկտար պլտղատու ալզու բովանդակ յեկամուտը մեծ է մեկ հեկտար ցորենի յեկամուտից:
- Այս բոլորի համար կազմեցեք դիագրամմաներ:

II.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՏՂԱԲՈՒԹԱԿԱՆ ԾՐՁԱՆՆԵՐԸ

Պտղաբուծության տեսակետից Հայաստանը մոտավոր ճշտությամբ կարելի յե բաժանել յերեք գոտու:

1. Յերեանի, Եջմիածնի, Դարձաղյաղի և Մեղրու գավառների ցածրադիր շրջանները:
 2. Այդ գավառների, այլ և Դիլիջանի, Լոռի-Փամբակի և Զանգեզուրի նախալեռնային շրջանները:
 3. Բոլոր գավառների լեռնային շրջանները:
- Ցածրադիր շրջաններում տարածված են գլխավորապես ծիրան, գեղձ, տանձ, թութ:

Նախալեռնակին շրջաններում՝ խնձոր, սալոր, տանձ, բալ:

Իսկ ամբողջ լեռկրում պտղատու ծառերի տեսակներն ըստ իրենց քանակի կարելի լեռ դասավորել հետևյալ հաջորդականությամբ — ծիրանի, սալորենի, դեղձինի, խնձորենի, թթենի, կեռաւենի, բալենի, տանձենի, ընկուզենի, փշատի, սերկելիի, ուսենի, թզենի, հոնի և այլն:

Այս գոտիներից լուրաքանչյուրը բաժանվում է բազմաթիվ ավելի մանր մասերի, վորոնք իրարից զանազանվում են տեսակներով և փոփոխակներով և, վոր դիմավորն ե, պտղակների վորակով։ Այդ բոլորն առաջանում են նրանից, վոր չայսաստանի տարրեր տեղերը կլիմայի, հողի տեսակիցից խիստ կերպով զանոազանվում են իրարից, ուստի և մի տեղ ծիրանն և լավ, միտւ տեղ ստացվում են հիանալի խնձորներ և այլն։

ՀԱՐՑԵՐ ՅԵՎ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զեր այգում ի՞նչ տեսակի պտղատու ծառեր կան:

2. Ամեն մի տեսակից քանի՞ հատ եւ:

3. Դուրս բերեք նրանց տոկոսային հարաբերությունը (կազմեցեք տախտակ):

4. Ի՞նչ պտղուներ եք ծախում:

5. Վ՞ո՞ր պտղուներն եք համարում ամենաձեռնություն:

6. Գլուղում ի՞նչ տեսակ պտղատու ծառեր են տարածված:

7. Դուրս բերեք նրանց տոկոսային հարաբերությունը (կազմեցեք տախտակ):

8. Գլուղում ամենից շատ վ՞ո՞ր պտղուներն են ծախվում:

9. Վորոնք են համարվում ամենից ձեռնոտուները:

10. Կազմեցեք տեսակների տոկոսային հարաբերության դիագրամման ամբողջ Հայաստանի համար:

11. Գլուղի շրջակայքում կմն վայրի պտղատու ծառեր ու թփեր և ի՞նչպիսիք են աճում (անտառում, բաց գաշտում, կիրճերում և այլն):

12. Վ՞արեղ և ի՞նչպիսիք են աճում (անտառում, բաց գաշտում, կիրճերում և այլն):

13. Գլուղացիք ոգտագործում են ալդ պտղուները:

14. Ի՞նչպիսիք և ի՞նչ նպատակի համար (չորացներ, ողի քաշել):

15. Ծախվում են վայրի պտղուները և ի՞նչ դըրությամբ:

16. Հավաքեցեք վայրի և կուտուրական պտղատու ծառերի և թփերի զանազան տերեներ (տերևներ, ծաղիկներ, ճյուղեր, պտղուներ):

17. Համեմատեցեք տարրեր պտղատու ծառերի ու թփերի զանազան մասերն իրավ հետ և սովորեցեք զանազանել և ճանաչել տարրեր տեսակներն ըստ նրանց ծաղիկների, տերեների, ճյուղերի, բողբոջների և կեղեկի։ Ուշադրություն դարձրեք տերեների ձեի ու մեծության վրա։

18. Դիտեցեք՝ վ՞ո՞ր շիվերի ճյուղերի վրա յեն նստած ծաղիկներն ու պտղուները խնձորի, տանձի, կեռասի, բալի, դեղձի, ծիրանի և սալորի ծառերի մոտ։ Լինում են պտղուներ խնձորենու և տանձենու միամյա ճյուղերի վրա։ Լինում են պտղուներ դեղձենու, սալորենու, բալենու, կեռասինու միամյա ճյուղերի վրա։

19. Նկարագրեցեք ինձորենու, տանձենու, սաւլորենու, բալենու, դեղձենու և ծիրանի պտղակիր շիւվերն ու ճյուղիրը: Ուշադրություն դարձրեք նրանց ձեփի, կեղեի և տարիքի վրա: Միատեսամկ են արդյոք ճյուղի վրայի բոլոր աչքերը (ձեռվ և մեծությամբ): Կտրեցեք աչքերը յերկայնքից ու լախնքից, զննեցեք խոշորացուցով: Ուշադրություն դարձրեք՝ վորհնց մեջ դուք կնկատեք ծաղկի կազմվելու սկիզբը: Ի՞նչպես են դասավորված խնձորի, տանձի, սալորի, դեղձի, կեռասի, բալի և ծիրանի ծառերի ծաղկային բողբոջները, քանիտեսամն հատ միասին են:

Լավ դիտեցեք և համեմատեցեք տանձի, ինձորի, սալորի, կեռասի, դեղձի և ծիրանի ծառերի ծաղկային բողբոջները. վորոշեցեք՝ յուրաքանչյուր բողբոջի մեջ քանի ծաղիկ կա:

Հավաքեցեք ծաղիկներ յուրաքանչյուր տեսակից. զննեցեք և նշանակեցեք տարբերությունը: Ուշադրություն դարձրեք ծաղկակոթի յերկարության, ծաղկաթերթի գույնի, ձեռի և մեծության վրա: Դիտեցեք դասավորությունը, սպիրի ձեռը, առեջքների գույնն ու թիվը:

20. Կտրեցեք զանազան տեսակի ծառերի միամյա շիվեր, զիտեցեք կեղմի գույնը, նկատեցեք զանազանությունը: Կտրեցեք հին ճյուղերի կտորներ, զիտեցեք կեղմի և փայտանյութի գույնը:

21. Դուրս յեկեք այգի և կեղմի գույնով և ծառի ձեռվ վորոշեցեք, թե ինչ տեսակի ծառ ե (առանց տերեների): Կազմեցեք կոլեկցիաներ տերեներից, ծաղիկներից, ճյուղերից և այլն:

III

ԲԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱԶԳԵ- ՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՏՂԱՏՈՒ ՇԱՌԵՐԻ ՎՐԱ

Նախորդ գլխում մենք խոսեցինք այն մասին, վոր շնորհիվ ընական պայմանների տարբերության, զանազան տեղերում աճում և լավ են զարգանում զանազան պտղատու ծառեր: Այժմ տեսնենք, թե ինչպես են ազգում տաքությունը, խոնավությունը, քարմիները և հողը պտղատու ծառերի վրա:

Տաբուրյան ազգեցությունը.—Վորոշ տեսակի ծառեր լավ աճելու և պտուղ տալու համար պլահանագում են ավելի շատ տաքություն, մյուսներն՝ ավելի քիչ: Այսպես՝ ծիրանին, դեղձենին, նշենին, թթենին, կեռասենին և շատ ուրիշները իմաստ ցուրտ ձմռան չեն դիմանում և հասնելու համար պահանջում են շատ տաքություն և լույս: Բացի այդ, նշենին, ծիրանին, դեղձենին կանուխ են ծաղկում և հեշտությամբ են առևտում զարնանային ցրտերից: Այդ պատճառով մենք նրանց ավելի հաճախ պատահում ենք հարավում և ցածրագիր շոգ շրջաններում:

Խնձորենին, բալենին, սալորենին պահանջում են պակաս տաքություն, զիմանում են ուժեղ ցրտերին և այդ պատճառով ավելի հյուսիս են տարածված և ավելի յեն բարձրանում դեպի լեռները: Այստեղ առանձին նշանակություն ունեն փոփոխակները, վորովհետեւ նրանց մեջ կան շատ զիմացկուններ և շատ քնքուշներ: Կան փոփոխակներ, վորոնք լավ պտղաբերում են նույնիսկ Սիրիուսը:

ԽՆԴԻԲՆԵՐԻ ԹԵՎԱ ԱՌԱՋՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՅԵՐԵԲ ԵՆ ՂԻՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԳՐՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՃԵՐ ԳՐՈՒՂՈՒՄ:
2. ՅԵՐԵԲ ԵՆ ՂԻՆՈՒՄ ՎԵՐՋԻՆ ԳՐՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:
3. Ի՞նչքան ԺԱՄԱՆԱԿ ԳՐՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՆ ՂԻՆՈՒՄ:
4. ՂԻՆՈՒՄ ԵՆ ՃԵՐԱՆԸ ԽԻՍՏ ՍԱՌԱՄԱՆԻՔՆԵՐ և ՎԲՐ ԱՄԲԻՆԵՐԻՆ:
5. Ի՞նչքան ե յեղել ամենացածր ջերմությունը (իմանալ ամենամոտիկ ողերեռութաբանական կայանից):
6. Նկատվեմ են խիստ տարբերություններ ցերեկվա և գիշերվա ջերմությունների միջև:
7. Նկատվեմ են ճեղքեր և ֆլասվածքներ ծառերի բնի և ճյուղերի կեղեի դեպի արևելք և հարավ նայող մասերի վրա:
8. Յեթե նկատվում ե, հատկապես վԲՐ տեսակների վրա:
9. Բացատրեցեք դրա պատճառը:
10. Նկատվեմ ե արդյոք բրդքոջների, մատաղ ձլուղերի, վոստերի և ամբողջ ծառերի ցրահարություն ճռանից հետո և վԲՐ տեսակների մեջ:
11. Յեթե կան ցրտից տուժած ծառեր, դուրս բերեք տուժածների տոկոսային հարաբերությունն ըստ առանձին տեսակների և ըստ ֆլասվածքների (բողբոջի, մատաղ ճյուղերի, ամբողջ ծառի):
12. Հաճախակի լին լինում դարնան ցրտեր. իմացեք հասակավորներից՝ քանի դեպք ե յեղել վերջին 10 տարվա ընթացքում:

13. ՎՃՐ ՄԵՍԱԿԻ ԾԱՂԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ են պատահում այդ ցրտերը:

14. Ի՞նչպես են անդրադառնում ցրտերը տարբեր տեսակների ու փոփոխակների վրա:

ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ԱՊԳԵՑՈՒՅՑՈՒՅՑ. — ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՆՈՒՅՆԱՎԵՍ ՄԱՐԲԵՐ ԿԵՐԱՊՈՎ ԵՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՊՄՊԱ- ՄՈՒ ՃԱռԵՐԸ: ԱՅՍՊԵՍ՝ ԽՆԴՈՐԵՆԻՆ, ՄԱՆՃԵՆԻՆ, ԱՎԼՈ- ՐԵՆԻՆ, ԲԱԼԵՆԻՆ ՊՄԱՆՆՉՈՒՄ ԵՆ ԱՎԵԼԻ ՀԱՄ ԽՈՆԱՎՈՒ- ԹՅՈՒՆ, ՔԱՆ ՊԵՂՃԵՆԻՆ, ՆՉԵՆԻՆ, ՃԻՐԱՆԻՆ, ԿԵՊԱՍԵ- ՆԻՆ, ՎՈՐՈՆՔ ԼԱՎ ԵՆ ՃԱՌՄ ՀՈՐԱՅԻՆ ՄԵՂԵՐՈՒՄ: ԽՈ- ՆԱՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄ ԵԲԵԴ ՊԵՂՎՈՒՄ ՊՄՊԵՂՆԵՐՆ ՄՄԱց- ՎՈՒՄ ԵՆ ՎՈՀ ՀԱՄԵԴ, ՃՐԱԼԻ, ՎՈՀ ԱՐՈՄԱՏՈՎ: ԶՐԱՊԱ- ԿԱՍՈՒԹՅԱՆ ՊԵՂՎՈՒՄ ՊՄՊԵՂՆԵՐՆ ՄՄԱՑՎՈՒՄ ԵՆ ՄԱՆՐ և ՀՈՐ, ԲՐԱՋԻ ԱՅԴ ՀՈՐ և ՄԱՔ ՀՐՃԱՆՆԵՐՈՒՄ ՊՄՊԵՂՆԵ- ՐԸ ԱՐԱԳ ԵՆ ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ և ՃԱՌԱՆ ՊՄԱՎՈՂ ՊՄՊԵՂ- ՆԵՐԸ ՎԱՄ ԵՆ ԴԻՄԱՆՈՒՄ: ԱՅդ պատճառով ԸՆՊՈՒՆՎԱԾ Ե ԽՈՆԱՎ ՀՐՃԱՆՆԵՐՈՒՄ Մշակել զլխավորապես ՍԱԼՈՐԵ- ՆԻ, ԽՆԴՈՐԵՆԻ, ՄԱՍԱՄԲ ՄԱՆՃԵՆԻ, ԻՍԿ ՀՈՐ ՀՐՃԱՆՆԵ- ՐՈՒՄ՝ ՊԵՂՃԵՆԻ, ՃԻՐԱՆԻ, ԿԵՊԱՍԵՆԻ, ՆՉԵՆԻ և այլն:

Այն ՀՐՃԱՆՆԵՐՈՒՄ, ՎՈՐՏԵԼ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԻՆ Ե, ԱՊՎՈՐԱԲԱՐ ԿԱՐԵՔ ե լինում ալգիները ՃՐԵԼ. ԲԱՅց այս ՊԵՂՎՈՒՄ պետք ե լավ հիշել, վոր ամեն ԺԱՄԱ- ՆԱԿ ՃՐԵԼ չի կարելի: Զի կարելի ՃՐԵԼ հենց ծաղկելուց առաջ և ծաղկելու ժամանակ, վորովհետև զրանից հա- ճախ ծաղկելու թափվում են: Լավ ե ազդում, յերբ ջրում են ծաղկեները թափվելուց հետո, յերբ պմուղ- ները գարեել են սիսեսի չափ: Ամառվա ԸՆԹԱՑՔՈՒՄ ջրում են ըստ կարիքի: Առանձնապես շատ ՃՐԵԼ չի կարելի, և վորպեսզի խոնավությունը պմավի հողում ավելի յերկար ժամանակ, անհրաժեշտ ե յուրաքան-

Հյուր անգամ ջրելուց հետո հողը փխրացնել: Պտուղների հասունանալու ժամանակ ջրելու դեպքում բերքն ավելի շատ և ստացվում, բայց պտուղները դառնում են ջրալի և վոչ քաղցր:

ԽՆԴԻԲՆԵՐ ՅԵՎ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վար ամիսներին ամենից շատ տեղումներ (անձրև, ձյուն) են լինում ձեր զբանում:
2. Տարեկան վարքան տեղումներ են լինում ձեր արջանում (տեղեկությունները վերցրեք ողերեւթարանական կայանից):
3. Վար ամիսներն ամենից շատ չորային են:
4. Հաճմիս են անդում անձրեներ պաղատու ծառի ծաղկման ժամանակ:
5. Ի՞նչպես են անդրադառնում անձրեները ծաղկման վրա (վար տեսակների):
6. Կան գյուղում չջրվող կուլտուրաներ (վորոնք են):
7. Գյուղի այգիները ջրովի յեն, թե անջրդի:
8. Բանի անդամ և ինչ ժամկետներում են ջրվում այգիները:
9. Հողը փխրացվում ե ջրելուց հետո, թե վոչ:
10. Ցեթե կան չջրվող այգիներ, ինչու են նըրանք մշակվում (քանի անգամ և լեռը և փխրացվում այգին):
11. Անձրեների հետևանքով հիվանդություններ զարգանում են և վար տեսակների վրա:


Կարկտահարություն յեզ բամիներ, — կարկուտը պտղատու ծառերի մեծ թշնամին եւ կան շրջաններ,

վորտեղ ամեն տարի կարկուտը մեծ վնասներ են համար ցընում: Ցերքեմն՝ նա փչացնում ե ամբողջ բերքը, յերբեմն այլանդակում ե պտուղները, իսկ յերբեմն ել նույնիսկ խոր վերքեր ե հասցնում շիվերին և ճուղերին, և այդ վերքերի տեղերում զարգանում են հիվանդություններ: Վերջին տարիներս սկսել են կովել կարկը առ իմ հրթիսների միջոցով:

Քամիներ. — Վոչ պակաս վնասներ են հասցնում պտղատու ծառերին նաև քամիները: Նրանք պկում թափում են ծաղկիները, պտուղները, կոտրում են ճյուղերը: Այդ պատճառով փոփոխակների ընտրության ժամանակ այն տեղերի համար, վորտեղ հաճախակի քամիներ են լինում, անհրաժեշտ ե ընտրել այնպիսի փոփոխակներ, վորոնց վրայից պտուղները դժվարությամբ են պոկլում, և փայտանյութն ամուր է: Քամու մնասը նվազեցնելու համար տնկելիս շարքերն ուղղում են քամու ուղղությամբ: այդ զեղքում առաջին ծառերը պաշտպանում են մնացածներին, և այդին քիչ ե տուժում քամիներից: Բայց այդ, ագուշությունը անկում են բարձր ծառեր, վորոնք նույնպես պաշտպանում են այն քամիներից:

ՀԱՐՑԵՐ ՅԵՎ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաճմիս և պատահում կարկտահարություն ձեր գործում:
2. Ամենից շատ վար ամիսներին ե պատահում:
3. Հաճմիս են պատահում ուժեղ կարկտահարություններ. վարքան ե յեղել վերջին տասը տարվա ընթացքում:
4. Կարկուտները միան հասցնում են ձեր պտղա-



ՀԱՅԱՀՈ
ԻՆՍՏԻՏՈՒ
ՏԵՏՈՒՈՎԵՃ
Համական
Հ Ս Ս Հ

տու ալգիներին և ինչպիսի (պոկռմ են ծաղիկները, պտուղները, վիրավորմամ են ճյուղերը),

5. Հավաքեցեք կարկտից մսասկածների նմուշներ։

6. Հաճմխ են քամիներ լինում գյուղում։

7. Պատահմամ են ուժեղ քամիներ։

8. Վճր ամիսներին և վճր ուղղությամբ են փըշում քամիները։

9. Վնասմամ են քամիները պտղատու ալգիներին։

10. Ի՞նչ տեսակ մվաս են հասցնում (պոկռմ են ծաղիկները, պտուղները, ջարդմամ են ճյուղերը)։

Հողի ազգեցուքունք. — Ինչպես հայտնի յէ, հողերն իրենց վորակով իրարից շատ են տարբերվում։ Մի տեսակ հողը պարունակում է շատ ավագ, մյուսը՝ կավ, լերորդը՝ կիր, քարեր, կրային, քարքարոտ հողը սովորաբար ավելի չոր են, իսկ կավալիները՝ խոնավ։ Պտղատու ծառերն աճում են համարյա բոլոր հողերում, բացի ճանձային և աղի (շորաքաթ) հողերից. բայց լավ բերք ստանալու և առողջ ծառեր ունենալու համար պետք է աշխատել ընտրել հողին հարմար ծառ։

Ջանազան տեսակներն ու փոփոխակները տարբեր կերպով են վերաբերվում հողերին. այսպես՝

Խճճուենին պահանջում է խորը, պտղաբեր, վոչ շատ խոնավ և վոչ ել շատ չոր հողեր։

Ցանձենին սիրում է փուխր, խոր, թեթև և վոչ խոնավ հողեր։

Սերկեվիթը սիրում է փուխր, սննդարար հող և, կարող է աճել նաև վոչ առանձնապես խորը հողերում

Աալենին, կեռասենին՝ թեթև, ջուրը լավ անցակացնող և կրային հողեր. աճում են նաև քարքարուտ հողերում։

Միւրենին, զեղենենին, եօնենին լավ են աճում թեթև, կրային, ջուրը լավ անցկացնող հողերում։

Սալուրենին սննդարար, կավալին, կրային, վոչ շատ ծանր հողերում։

Այգու հողամասի ուղղությունք. — Այդին կարող է լինել և հարթ տեղերում և լանջի վրա. պտղատու այգու համար տեղ ընտրելիս ուշադրություն պետք է դարձնել թե վոր կողմն է ուղղված հողամասը՝ դեպի հարավ, դեպի հյուսիս, արևելք, արևմուտք և այլն։ Միաժամանակ պետք է հիշել, վոր հարավային լանջերը միշտ նալում են արևի կողմը, նրանք ավելի լավ են տաքանում, այստեղ տնկված ծառերի աշքերն ավելի շուտ են բացվում, պտղակները շուտ են հասունանում, ավելի լավ են զունավորվում, բայց միևնույն ժամանակ ավելի հաճախ են տուժում վաղ գարնանաւին ցրտերից, վորովհետև այստեղ ծառերն ավելի շուտ են բացվում։

Հյուսիսային լանջերը ցուրտ են, ավելի վատ են տաքացվում արևի կողմից, ավելի խոնավ են, Մասները տուժում են ձմռան ցրտերից, պտղակներն ավելի ուշ են հասունում և ավելի վատ են գունավորվում։

Արեվելյան լանջերը տաք են, բայց այստեղ ծառերը հաճախ տուժում են, վորովհետև ցուրտ գիշերներից հետո նրանք ցերեկը միանդամից տաքանում են, և այդ պատճառով հաճախ բնի կեղևը ճաքում եւ

Արեվմայան յեզ հարավ-արեվմայան լանջերը հա-

18. Յեթե նույն տեսակից չեն, կախված ե այդ
այգու հողից կամ ուրիշ պայմաններից:

19. Վար թարակում ծառերն ամենից շատ են
տուժում ձմռան և գարնան ցըտերից, քամիներից,
չորությունից, կարկտից:

20. Վարտեղ ավելի շուտ են բացվում ծառերը և
քանի՞ որով շուտ:

21. Վար թարակներում ավելի կանուխ են հաս-
նում պտուղները և քանի՞ որով կանուխ:

IV

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ՅԵՎ ԹՓԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Պտղատու ծառերն ու թփերը կարելի լե բազ-
մացնել շատ ձեւրով—սերմերով, կտրոններով, անդա-
լիզով, պատվաստի միջոցով և այլն:

Պտղատու ծառերը սերմերով բազմացնելիս սո-
վորաբար մենք ստանում ենք այնպիսի բույսեր, վո-
րոնք հաճախ նման չեն լինում այն բույսերին, վորից
սերմ ելինք վերցրել: Այսպես, որինակ՝ յեթե մենք ցա-
նենք Յերևանի շալախ ծիրանի սերմերը կամ մալաչա-
տանձի սերմերը, այդ դեպքում գրանցից ստացված
ծառերի պտուղները կարող են նման լինել շալախ
ծիրանին և մալաչա տանձին, բայց ընդհանրապես
նման չեն լինում: Այդ պատճառով, յեթե ցանկանում
են ստանալ վորոշ փոփոխակ, այդ դեպքում սովորա-
բար նըան պատվաստում են, կամ կտրոնով են տըն-
կում կամ անդալիզ են անում այդ փոփոխակից: Պատ-
վաստման, կտրոնով բազմացման և անդալիզի դեպքե-
րում կարելի յէ վստահ լինել վոր ստացված ծառը

մարդում են ամենալավերը, վորովհետեւ այնուեղ վոչ
շատ շոգ ե, վոչ ել շատ ցուրտ. արեն ու լույսը բա-
վարար են:

ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԾՈՒԱԶԱԴԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարտեղ ե ընկած ձեր այգին, համբթ տեղում,
թե լանջի վրա:
2. Լանջը վար կողմն ե նայում:
3. Ի՞նչպիսին ե այգու հողը (քարքարոս, կավա-
յին, պավային, կրային և այլն):
4. Այգում ամենից շատ ինչ տեսակի ծառեր
կան:
5. Վար տեսակի ծառերը լավ են աճում:
6. Տուժում են ծառերը գարնան և ձմռան ցըտե-
րից, քամիներից, պատահում են ծառերի կեղեկի վրա
արվածքները (վար տեսակների վրա):
7. Վարքան ալզիների թարակներ կան դյուղում:
8. Համբթ տեղում, թե լանջերում են ընկած այ-
գիները:
9. Լանջերը դեպի վար կողմն են նայում:
10. Պաշտպանված են քամիներից:
11. Լանջերը թե՞ են, դի՞ք:
12. Այգիները տերրասների վրա չեն, թե վոչ:
13. Ի՞նչպիսի յե ալզիների հողը:
14. Ի՞նչ տեսակի ծառեր կան այգիներում:
15. Վար տեսակից ե շատ:
16. Վորոնք են լավ աճում և պտուղ տալիս:
17. Բոլոր այգիներում նման տեսակի ծառեր են
թե վոչ:

կլինի հենց այն փոփոխակից, վորը ցանկանում ենք ունենալ վորովհետև վերցրել ենք այդ ծառից մի կտոր և նրան մեծացրել:

Բուլսերի բազմացման յեղանակները շատ են, բայց մենք կանցնենք պաղատու ծառերի և թփերի բազմացման ամենագիտավոր և տարածված յեղանակները:

Սերմերով բազմացում.—Սերմեր ցանելու միջոցով ծառերի բազմացումը սովորաբար կատարվում է նրա համար, վոր ապագայում այդ յեղանակով ստացված ծառերի վրա պատվաստեն այն փոփոխակները, վորոնք ցանկալի լին: Ամենից լավն ե ցանել աշնանը, վորովհետև այն ժամանակ սերմերը հողում պառկելով ամբողջ աշուն և ձմեռ խոնավ հողում, գարնանը կանուխ և համահավասար կծեն: Իսկ գարնան ցանած սերմերը կծեն ավելի ուշ, վոչ համահավասար, իսկ հաճախ բոլորովին նույն տարին չին ծըլում: Սակայն շատ հաճախ ե պատահում, վոր այս կամ այն պատճառով չի հաջողվում աշնանը ցանել և պետք ե լինում հետաձգել գարնանը: Վորպեսզի սերմերը լավ պահվեն և ծեն, նրանց խառնում են խոնավ ավազի հետ և այդպես պահում մինչև ցանելը: Ավագում լավ պահված սերմերը ծլում են սովորաբար հենց նույն գարնան: Պետք ե ցանել լավ փխրացրած, պարարտացըրած մարզերի մեջ շարքերով: Շարքերով ցանելիս սերմերն ընկնում են իրար հավասար հեռավորության վրա, դրա շնորհիվ բուլսերն ստանում են հավասար չափով լուս, ոդ, ջուր և հող: Իսկ շաղացանի դեպքում սերմերն ընկնում են տեղատեղ իրար շատ մոտ, տեղատեղ շատ հեռու, այդ պատճառով մի-

տեղ ծիփերը շատ խիտ են լինում, մեռւ տեղ՝ շատ նոսր, դրա հետեւանքով վորոշ բուլսեր լավ են զարգանում, իսկ միունքը խանգարում են իրար և մասն թուլլ ու փոքր: Բացի այդ շարքերով ցանածն ան թուլլ ու փոքր: Բացի այդ շարքերով ցանածն ան թուլլ ու արագ կարելի է քաղհանել և փխրացնել, քան շաղացանը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՅԵՎ ՀԱՐՑԵՐ ՈՒ ԱՌԱՋԱ-
ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. Սերմերով բազմացում

1. Պատրաստեցեք տափակ արկդ 15-20 սանտիմետր խորությամբ, վորը հատակին ունենա անցքեր, փակեցեք այդ անցքերը կավե ամանի կտորատանքներով կամ քարերով: Լցրեք արկդի հատակին 2-3 սմ. մաքուր ավազ, նրա վրա լցրեք ավազի հետ խառնած սերմեր 2 սանտիմետր հաստությամբ, նույնից մաքուր ավազ և ալին: Վերևից ամբողջը ծածկեցաք ավազի շերտով, ջրեցեք, ապա դրեք նկուղ կամ ցեղաքաղաքացի շերտով, ապա դրեք նկուղ կամ ցանածաւ: Զմեռվա ընթացքում ջրեցեք 2-3 անգամ:

2. Հողամասը լավ փորեցեք, պատրաստեցեք մարզեր ամեն մեկը 1 մետր լայնությամբ: Մարզերի լայնությամբ իրարից 10 սմ. հեռավորության վրա ակոսներ բաց արեք: Այդ ակոսների մեջ ցանեցեք ինձորի, տանձի, բալի սերմեր իրարից 2-3 սմ. հեռու և ծածկեցեք նորից 1½-2 սմ. հողի շերտով: Դիղձի, ծիրանի, ալուչաչի և ալլ սերմեր ցանելիս շարքերի միջտարածությունը թողեք 25 սմ., իսկ շարքում սերմերի հեռավորությունն իրարից 10 սմ.:

3. Կոտրեցեք միթանի դեղձի, ծիրանի կորիզներ,

սերմերը՝ հանեցեք, կտրեցեք ըստ լեռկարության. դիտեցեք՝ վիրտել և գտնվում սաղմը. Այդ դիտելուց հետո ցանեցեք կորիզներն այնպիս, վոր այն ծայրը, վորտեղ գտնվում և սաղմը, դեպի ներքև նախի: Միքանի սերմեր ել ցանեցեք այնպիս, վոր սաղմը դեպի վերև նայի: Ծիլերն իհրեալիս քանդեցեք և նայեցեք, թե ինչպիսի դիրք են ընդունել արմատները տարբեր դեպերում:

4. Կանուխ գարնանը ցանեցեք թե աշնանից ավագի մեջ պահպած և թե չոր գրությամբ պահպած սերմերը: Հետեցեք, իերը գուրս կցան ծիլերը մարգերում, տեսիք՝ նրանք համահավասար են գուրս յեկել թե վոչ: Հավաքեցեք տարբեր տեսակների ծիլերը, զըննեցեք և չորացրեք: Ուշադրություն դարձրեք՝ տարբեր տեսակների ծիլերի գույնը, տերեկիների ձևն ինչպիս են, նման են արդիոք առաջին յերկու տերեկիները մնացածներին: Չորացրեք տարբեր տեսակի ծիլերը:

5. Զեր զուրղում պտղատու ծառերի սերմեր ցանում են, թե վոչ. Ի՞նչպիս են ցանում. Նկարագրեցեք:

Բ. ԿՏՐԵՆԵԵՐԵՎ Բազմացում

1. Սերկելիի, թզի, թթի և այլ առողջ ծառերից աշնանը կամ կանուխ գարնանը կտրեցեք միաժա առողջ շիփեր:

2. Լավ զննեցեք շիփի աչքերը հիմքի մոտ, մեջտեղում և ծայրին:

3. Ուշագրություն դարձրեք՝ նրանցից վորհնք են ավելի լավ զարդացած և առողջ:

4. Կտրեցեք շիփի հիմքն ու ծալը,

5. Միջին մասից պատրաստեցեք կտրոն, կտրեցեք այնպես, վոր ներքին կտրվածքը լինի ուղիղ աչքի տակից, այդտեղից հաշվեցեք 4—8 աչք և գերին մասից թեք կտրեցեք այնպես, վոր ջուրը հոսի աչքին հակառակ կողմը (տես նկ. № 1):


Զոր տեղերում պետք ե վերցնել ավելի յերկար՝ 50—60 սմ. կտրոններ, իսկ խոնավ տեղերում կարելի յե վերցնել ավելի կարճ կտրոններ, վորովհետեւ վորքան կտրոնը յերկար ե, այնքան արմատն ավելի խորը շերտում կկազմակերպվի, իսկ հողի խոր շերտերը միշտ ավելի խոնավ են:

6. Պատրաստեցեք մարգեր. Նըանց յերկարությամբը փորեցեք առուներ տընկվելիք կտրոնների յերկարության համապատասխան խորությամբ: Առվի մեկ պատը պետք ե ուղղահայց լինի: Դրեք կտրոնները առվի ուղղահայց պատին կպած այնպես, վոր հողի յերեսին մնա 2 աչք: Նկ. 1. Տնկելու կտրոնը կտրոնից պետք ե հեռու լինի 10 համար պատամ: Ապա առուն լցըք հողով, հողը վոտով ըստ կտրոն: պինդ կպցըք կտրոնին և մարգի յերեսը հավասարեցըք: Կտրոնի հողից գուրս մնացածի բուկը լցըք փուխը հողով: Մտածեցեք և բացատրեցեք, թե ինչու համար ե այդպիս արվում: Հետեւյալ շարքը տընկեցեք առաջինից 50 սմ. հեռավորության վրա:

Տնկելուց հետո ջրեցեք: Ամառվա ընթացքում ջրեցեք, քաղհանեցեք և հողը փխրացըք:


7. Ի՞նչպիս են առկում կտրոնները ձեզ մոտ գյուղում:

8. Մեկ մարդ տնկեցեք տեղական յեղանակով:

9. Աշնանը կամ գարնանը քանդեք-հանեցեք կտրոնները, ուշադրություն դարձրեք՝ արմատների մեծ մասը վժրտեղ են զարգացած՝ հանգուցների վրա, թե միջանգուցային տարածության վրա: Ինչու:

10. Համեմատեցեք տեղական յեղանակներով տնկած կտրոնների արմատներն ու ճլուղերը վերև հիշված ձեռվ տնկած կտրոնների հետ:

11. Տնկեցեք անցյալ տարվա արմատակալած կտրոնները մշտական տեղում:



Ա.

Բ.

Գ.

Նկ. 2. Կտրոններ տնկելը, ա) առվի մեջ շարված կտրոններ, բ) դեռ բոլորովին չծածկված կտրոններ, գ) արդին ծածկված կտրոններ:

գ. Թեղալիզով բազմացում


1. Թթենու, թզենու, նոնենու և կաղինի (տկողինի) թփի վրա ընարեցեք առողջ միամբա կամ յերկամյա ճյուղեր:

2. Մասից կամ թփից քիչ հեռու փորեցեք մի առու 20—25 սմ. խորությամբ (չոր տեղերում 50—60 սմ.):

3. Ճյուղը պառկեցրեք առվի մեջ յերկարությամբ

և կպցրեք հողին փալու կարմիրով, ճուղի ծալին առվից զուրս հանեցեք և կապեցեք ձողից այնպես, վոր նա համարյա ուղիղ կանգնի:

4. Առվի մեջ գտնվող մասի ամեն մի աչքի առկ կտրվածք արեք:



Նկ. 3. Անդալիզ:

5. Առուն լցրեք հողով և ջրեցեք:

6. Ճյուղի վերին ծալը կտրեցեք այնպես, վոր հողի յերեսին մնա 2 աչք:

7. Աշնանը կամ գարնանը բաց արեք առուն. ուշադրություն դարձրեք թաղված ճյուղերի վրա՝ արմատներ առաջացնել են, թե վոչ, և վոր տեղերում:

8. Կտրեցեք-բաժանեցեք արմատակալած ճյուղերը մայր բուսից և տնկեցեք մշտական տեղում:

դ. Զենական անգալիզ

1. Ըստրիցեք ցանկացած ծառի կամ թփի վրա ճյուղեր, պառկեցրեք 10—20 սմ. խորությամբ առվի մեջ սովորական անդալիզի նման: Առուն հողով մի լցնեք:

2. Ամառը, յերբ ձևուղի վրա աչքեր կրացվեն և կդառնան 15-20 սմ., ամեն մի աչքի տակ կտրվածք արեք, ապա առուն լցրեք հողով:

3. Աշնանը կամ գարնանը բացեք և նալեցեք, թե փրաხեղ են առաջացել արմատներ (տես նկ. № 4): Բոլոր արմատակալած ճյուղերը բաժանեցեք իրարից և անկեցեք մշտական տեղում:



Նկ. 4. Զիհական անդալիկ ամառվա վերջում:

4. Համեմատեցեք այդ յերկու ձեփ անդալիզներն իրար հետ:

5. Զեր գյուղում անդալիկ կատարվելու հետ:

6. Վմբ տեսակի ծառերն են բազմացվում անդալիզով:

7. Նկարազրեցեք անդալիկի տեղական ձեր:


8. Ինչպվ և տարբերվում կտրոններով բաղմացումը անդալիզով բազմացումից:

9. Վմբ ձեն ավելի պարզ ու հարմար ե աշխատանքի տեսակետից:

10. Վմբ ձեի դեպքում պետք ե բույսերը հեշտությամբ արմատակալեն:

Ե. Բազմացում բուկ լցնելու միջոցով

Կանուխ դարնանը թղենի, թթի, տկողինի և առառերը հիմքից 10—15 սմ. բարձրությամբ կտրեցեք:



Նկ. 5. Բազմացում բուկը լցնելու միջոցով՝ յերկում են նոր արմատներ:

Ամառը, յերբ կստացվեն 20—30 սմ. իրկարության շիվեր, կամ աշնանը նրանց ներքին մասի վրա

փոքրիկ կտրվածքներ արեք և բուկը լցրեք հողով։ Դրանից հետո ամառվա ընթացքում ջրեցեք, վիսրացրեք, լերբեմն-լերբեմն նորից հող լցրեք բկին կամ գարնանը փոխեցեք, հանեցեք, տեսեք՝ վորտեղ են առաջացել արմատներ (տես նկ. № 5). Զոկեցեք և առանձնացրեք արմատակալած շիվերը և տնկեցեք մշտական տեղում։

զ. Բազմացում բուփք բաժանելու միջոցով

Ընտրեցեք վարդի, մորիի, հաղարջի և մի թուփը փորեցեք-հանեցեք. Նայեցեք՝ արմատից ինչպես են դուրս գալիս ճյուղերն ու շիվերը։ Թուփը բաժանեցեք միքանի մասի այնպիս, վոր յուրաքանչյուր մասում լինի մեկ կամ յերկու շիվ արմատի հետ։ Շիվի ծայրը կտրեցեք, ապա տնկեցեք մարգերի մեջ շարքերով։

Պատվաստ

Պատվաստու ծառերն ամենից հաճախ բազմացվում են պատվաստի միջոցով։ Պատվաստի ժամանակ մենք վերցնում ենք վորեւ ծառի շիվի կտոր, գնում մի ուրիշի ծառի վրա և իրար կպցնում։ Այս լեզանակով մենք բազմացնում ենք այնպիսի փոփոխակներ, վորոնք այս կամ այն պատճառով գնահատելի յեն մեզ համար։ Այն բուկը, վորի վրա պատվաստում են, կոչվում ե պատվաստակուլ իսկ պատվաստվող բույսը՝ պատվաստացու։ Պատվաստ կարելի յե կատարել թե հասակավոր ծառերի ճյուղերին, և թե բոլորովին ջահել՝ մեկ կամ յերկամյա ածերին (ծառիկներին)։

Պատվաստման յեղանակները շատ շատ են*), Վորոշ յեղանակներով պատվաստը կատարվում ե կանուխ գարնանը, մյուս յեղանակներով՝ ուշ գարնանը, ամառը և այլն։


Յերբ ել վոր կատարվի պատվաստումը, վորպեսզի պատվաստը լավ բռնի, անհրաժեշտ ե, վոր պատվաստացուի աչքերը լինեն քնած դրության մեջ, իսկ պատվաստակալի աչքերը կարող են լինել կամ քնած կամ արդեն հյութաւոր դրության մեջ։ Այդ դեպքում պատվաստացուն դեռ աչքերը չբացված արդեն կմիանա պատվաստակալի հետ, և հյութը պատվաստակալից կանցնի նրան։ Իսկ յեթե մենք քնած պատվաստակալին պատվաստինք աճող պատվաստացու, այն ժամանակ վերջինը շուտով իր միջի ջուրը կգոլորշիացնի և կչորանա, վորովհետեւ դեռ չի կարող պատվաստակալից ստանալ սնունդ և ջուր նրա քնած լինելու պատճառով։

Պատվաստման ժամանակ պետք ե պահպանել լաքրություն, այսինքն հետեւ վոր գործիքները լինեն մաքուր, կտրվածքներին ձեռք չտալը։

Պատվաստ կարելի յե անել ամեն մի դանակով, միայն թե նա լինի սուր և մաքուր. բայց աշխատանքի հարմարության և արագության համար սովորաբար գործածում են և նկարում ներկայացված դանակները։ Դանակ նկ. № 6-ա.ն կոչվում ե պատվաստի դանակ, իսկ 6-ը-ն՝ աչքապատվաստի դանակ։ Նրանցով հարմար ե կտրվածքներ անել կտրոնների վրա, իսկ

*.) Պատվաստի մասին կարդա իս. Տեղ-Ներսիսյանի «Ենչպատվաստել պատվաստու ծառերը» գրքույկը։

աչքապատվաստի դանակի յետեկի մասում գտնվող
վուկրիկը և պատվաստի դանակի վրաէի թմբաձև մա-
սը կեղևը բաց անելու համար են:




Նկ. 6. ա) Պատվաստի դանակ. բ) աչքապատվաստի դանակ:

№ 7 նկարի դանակը չոփերը և բարակ ճյուղերը
կարելու և պատվաստակալները ճեղքելու համար ե,




Նկ. 7. Այգու դանակ:

Վորից պետք ե ունենա չուրաքանչչուր այգեգործ:
Նույն նպատակի համար են ծառալում մկրատւսեկա-
տորները (Նկ. № 8):



Նկ. 8. Այգու մկրատ:

Ավելի հաստ ճյուղերը սղոցելու համար ծառալում
են այգու սղոցները (Նկ. № 9):



Նկ. 9. Այգու սղոց:

Միենում տեսակը կարելի լե պատվաստել տար-
բեր պատվաստակալների, և ծառի կյանքի համար շատ
կարելու և պատվաստակալի ճիշտ ընթրությունը:

Պատվաստի շնորհիվ հնարավոր և դանում ծա-
ռերը բազմացնել իրենց վոչ հարմար պայմաններում:
Որինակի համար գեղձենին սիրում և չոր հողեր, խո-
նագ հողերում լավ չի աճում. լեթե նրան պատվաս-
տենք սալորենու վրա, այն զեղքում նա լավ կանի
նաև խոնավ հողերում. Սիրիրի խնձորենուն պատ-
վաստված տեղական խնձորենին ավելի լավ ե դիմա-
նում ցրտին. Դամբուլի ծառը ծիրանիին պատվաստե-
լիս լավ ե դիմանում չոր տեղերում:

Բացի ալդ, տարբեր պատվաստակալների վրա
մենք կարող ենք ստանալ տարբեր բարձրության ծա-
ռեր. Որինակը տանձենին մի ուրիշ տանձենու հետ
պատվաստելիս ստացվում ե խոշոր և բարձր ծառ և
յերկար և ապրում. իսկ սերկելի ծառին պատվաս-
տածը փոքր ե մնում, արագությամբ և փշանում, բայց
շատ շուտ ե սկսում պտուղ տալ այն ել խոշոր պլ-
տուղներ. Այսպիսով մենք տեսնում ենք, վոր պատ-
վաստակալի ընտրությունից շատ բան ե կախված:
Հիմա տեսնենք, թե ինչը ինչին կարելի յե պատվաս-
տել:

ԽԵՆԱՐԵՑԻՑ — վայրի խնձորենուն և այսպէս կոչ վող՝ դրախտախնձորին (ստացվում են մանր, թզուկալին ծառեր), նաև սիրիական խնձորենուն:

ՏԵՂՃԵՑԻՑ — վայրի տանձենուն, սերկելիին, զիհուն և սիրին:

ԴԵՂՃԵՑԻՑ — դեղձենուն, ծիրանիին, սալորենուն, նշենուն, ալուչային:

ՍԱԼՈՒԵՑԻՑ — նշենուն, սալորենուն, ծիրանիին և ալուչային:

ԿԵՌԱՍԵՑԻՑ — կեռասենուն, մահալերին և բալենուն:

ԲԱԼԵՑԻՑ — բալենուն, կեռասենուն և մահալերյան բալենուն:

Ամենից լավ և պատվաստել վայրի սերմերից ստացված փոքր ածերին, վորովհետև վայրի ծառերը սովորաբար ավելի զիմացկուն են լինում ցրտին, չորությանը և պահանջկոտ չեն հողի նկատմամբ: Իսկ պիգու տեսակները սովորաբար ավելի քնքու են և պահանջկոտ:

Իրեն պատվաստացու կտրոն պետք ե վերցնել առողջ և արդեն պառաղ տված ծառից: Կտրոնները պետք ե ունենան լավ զարգացած աչքեր, աչքերի միջի տարածությունը մեծ չպետք ե լինի, պետք ե լինի մոտավորապես մատիտի հաստության:

Պատվաստի ձևերը շատ շատ են, բայց մենք կծանոթանանք ամենից շատ տարածված և կարեոր ձևերի հետ:

ԳՈՒԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՊԱՏՎԱՍՏԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ,

Աշխատանքներն սկզբում կատարվում են գասարանում, վոստերի և կտրոնների կտորների վրա: Վարժվելուց հետո աշխատանքը տեղափոխում են ալզի:

Մածիկ պատրաստելը

1. Վերցրեք մեղրամոմ, կանիֆուլ և տավարի փորի ճարալ ամեն մեկից հավասար քանակութիւմք:

2. Լցրեք թիթեղյա ամանի մեջ և հուղցեք մեզմ կրակի վրա ու լավ խառնեցեք:

3. Այս մածիկը քսում են պատվաստներին՝ կապելուց հետո, և այն վերքերին, վորոնք առաջանում են ճուղերի կտրած տեղերում:

Ուշ աշնան կամ կանուխ գարնան կտրեցեք միամյա վոստեր պատվաստացուների համար: Յեթե նույն որը չեք կարող պատվաստել այդ զեպքում կտրոնները դրեք ջրի մեջ կամ փաթաթեցեք թաց շորով կամ թաց մամուռով: Յեթե ցանկանում եք լերկար ժամանակ պահել, այդ զեպքում թաղեցեք իրնազ պվազի կամ հողի մեջ:

Ա. ՃԵՂԱՊԱՏՎԱԾ

Ճեղապատվաստ կատարվում է այն ժամանակ, յերբ պատվաստակալը պատվաստացուից ավելի հաստ եւ:

1. Պատվաստակալի ճյուղն ուղիղ սղոցեցեք:

2. Սուր դանակով յերկարությամբ մեղք բացեք


2-3 ամ. վոչ ավելի:

3. Կրկն պատվաստացու ընտրված վոստի միջին մասից պատրաստեցեք յերկաչքանի կտրոն։ Վերին աչքից վերև՝ թեք կը տրըցեք, ներքին աչքի տակի մասը կտրեցեք այնպես, ինչպես № 10 նկարում ցույց ե տրված։

4. Կտրոնը դրեք պատվաստակալի ճեղի մեջ այնպես, վոր պատվաստակալի և պատվաստացուի կեղևների ներքին յեզրներն իրար հանդիպեն։

5. Պատվաստը պինդ փաթաթեցեք ձլողով կամ ոսֆիայով և վերկրկց քսեցեք մածիկ։

Յեթե պատվաստակալը հաստ է, կարելի է պատվաստել 2, նույնիսկ 4 կողմից, տես նկ. № 10։



Նկ. 10. Ճեղապատվաստ

Բ. Կողեց պատվաստ

Պատվաստակալն ու պատվաստացուն տարբեր հաստության են։

1. Պատվաստակալը կտրեցեք այնպես, ինչպես

ճեղապատվաստի դեղքում, կողքից արեք կտրվածք 2-3 սմ, յերկարությամբ։

2. Կտրեցեք կտրոն և ներքին աչքի տակ արեք թեք կտրվածք 2-3 սմ, յերկարությամբ (տես նկ. № 11): Ուշագրություն դարձրեք, թե № 11 նկարում ինչպես են դասավորված կտրոնի աչքերը։

3. Դրեք կտրոնի կտրվածքը պատվաստակալի կտրվածքի վրա, պինդ կապեցեք պատվաստը և քսեցեք մածիկ։

Գ. Պատվաստ կեղեգի տակ


Պատվաստում են ուշ գտրնան, յերբ կեղել լավ ե պոկվում։

1. Կտրեցեք մի պատվաստակալից մի վոստ սովորականի նման։

2. Մնացած հիմքի կեղել մակ կողմից յերկարությամբ կտրեցեք 3-5 սմ, և բաց արեք։

3. Պատվաստացուն կտրեցեք այնպես, ինչպես կողքից պատվաստի դեղքում։

4. Պատվաստացու կտրոնը դըք պատվաստակալի կեղեկ տակ բացված տեղից, պինդ կապեցեք և քսեցեք մածիկ։



Նկ. 11. Կողեց

Դ. Աչքալաւլաստ

պատվաստ

Կատարվում է ամառվա վերջին կամ գարնանը, յերբ կեղել լավ ե բաժանվում։

Միքանի որ առաջ ծառը լավ ջլեցեք:
 1. Կորեցեք կտրոններ իբրև պատվաստացու;
 2. Պոկեցեք նրանց վրալի տերենհրը; բայց նը-
 րանց կոթերը թողեք (տես նկ. № 12):




Նկ. 12. Աչքապատվաստի համար վերցրած կտրոնը.

3. Այդ կտրոնի վրայից կտրեցեք մի աչք, հետը
 միքիչ փայտանյութ վերեից և ներքեից, ինչպէս նկ.
 № 13-ում ցույց ե որված:

4. Ցեթե պատվաստակալը մեկ-լերկու տարեկան
 և, հենց հողին մոտ տեղում, իսկ հասակավոր պատ-

վաստակալի դեպքում ջահել ճյուղի վրա կտրվածք
 արեք № 14 նկարում ցույց տվածի նման:




Նկ. 13. Աչքապատվաստի համար կտրված աչքը:

5. Դանակի վոսկրիկով զգուշությամբ բաց արեք
 կեղեց, դրեք աչքը կեղեցի տակ և կապեցեք:

6. Տաս որից հետո նայեցեք բուլոր պատվաստնե-
 րը, Ուշադրություն դարձրեք տերենների կոթերին,
 արդյոք բուլորը մնացի և են: Մնացած կոթերին զգու-
 շությամբ մատ տվեք, ուշադրություն դարձրեք՝ վճր
 աչքերի մոտ տերենների կոթերն արդեն ընկած են
 աչքերի մոտ տերենների կոթերն արդեն ընկած են
 կամ հեշտությամբ լնկնում են և վորոնց մոտ մատ
 տալիս շեն ընկնում:

Եղբակացը վճր պատվաստներն են բռնել:
 Բացատրեք՝ ինչո՞ւ համար են թողնում կոթերը:

7. Բոնած պատվաստի վրալից կապերը քանդեւց և կապեցեք նորից ավելի թուլ:



Նկ. 14. Աչքապատվաստ

8. Միքանի պատվաստ թողեք հին կապերով և մի շաբաթ հետո նայեցեք և համեմատեցեք նրանց հետ, վորոնց կապերը փոխել ենք:

Հանեցեք լեզրակացություն, թէ ինչու հաւար և լերկորդ անգամ կապվում:

ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ձեր գյուղում պատվաստ անում են:
2. Ինչ տեսակներ են պատվաստում և ինչ պատվաստակալներին:
3. Ինչպես են կատարվում տեղական պատվաստները. նկարագրեցիք:
4. Միքանի պատվաստ արեք տեղական ձեռվ:
5. Գյուղում կատարվում են այս գրքուկում նկարագրված ձեռվ պատվաստներ:

V

Տ Կ Ա Ր Ա Ն

Վորպեսզի ինքներս կարողանանք մեծացնել լավ, առողջ ծառեր և ստանանք նըանցից առաջին բերքը, պետք և կորցնենք բավականին շատ ժամանակ—7-8, յերբեմն և ավելի տարիներ, բացի այդ, պետք և ունենանք փորձառություն:

Անա այդ պատճառով ծառեր բուսցնելու համար կազմակերպում են հատուկ տնկարաններ. Տնկարանում ցանում են պատվաստակալի սերմեր, ապա դուրս ցելած բույսերին պատվաստում են լավ փոփոխակներ: Պատվաստելուց հետո մեկ-էրկու տարի գեռ թողնում են տնկարանում, մինչև վոր զառնա մի փոքրիկ ծառ ճիշտ զասավորված ճյուղերով, ապա նոր միայն հանում են և տնկում մշտական տեղում—այգում:

Խորհրդավին Միության մեջ տնկարաններ կազմակերպում են մեծ մասմբ պիտական կամ կոռպերատիվ հիմնարկներ: Տնկարաններն արդյունաբերա-

կան պողաբուծության զարգացման համար շատ մեծ նշանակություն ունեն, Դրանց շնորհիվ մենք կարող ենք բնակչության մեջ տարածել լավ փոփոխակները վորոնք պահանջվում ու լավ գնուհավում են շուկայի կողմից, այլ և հայթալիթել նրան առողջ լավ գարգարաց պսակով և արմատներով ծառեր Սովորաբար գյուղիք իրենց չփառալու շնորհիվ աճեցնում են անդունի, միակողմանի ծառեր, վորոնք հենց սկզբից արդար հիվանդ են լինում, վորովճեակ անշնորհք կատարված կտրվածքների վրա առաջ են գալիս հիվանդություններ. բացի այդ պատվաստում են ամեն մի պատահած փոփոխակ, վորը հաճախ վոչ մի գին չունի:

Հայտնի յե, վոր յերբ միենույն բույսը միքանի տարի միենույն տեղում ապրում ե, այդ գեղքում հողաբատանում ե, և բույսը թույլ ե լինում: Այդ կումը յուրաքանչյուր անգամ կատարվում է նոր տեղում, և յերբ 3 տարի հետո տնկիները հանգում, տեղափոխվում են մշտական տեղը, ազատված հողամասն զբաղեցնում են բանջարանոցով կամ խոտերով և 2 տարուց շուտ այնտեղ նորից ծառեր չեն տնկում:

Յուրաքանչյուր լավ տնկարանում պետք ե լինի լավ այցրում: Մայրուտում պետք ե լինեն այն փոփոխակները, վորոնք պետք ե տարածվեն ժողովրդի մեջ: Բացի գրանից անհրաժեշտ ե ունենալ նաև ծառեր՝ պատվաստակալի սերմեր վերցնելու համար:

Յուրաքանչյուր տնկարան սովորաբար ունենում է 4-5 բաժանմունք. առաջին հերթին բազմացման բաժանմունք, վորակ կատարվում ե ցանք, կտրոններով, անդալիզով բազմացում և ալին: Ալին Ալինի բույ-

սերը խիտ են գասավորված: Հետեւյալ տարին այս բաժանմունքից բույսերը հանվում և վերատնկվում են ուրիշ տեղ և ավելի լայն տարածության վրա. Նույն տարին—ամառը, լեթե տունկերը բավական զարդույն տարին—ամառը, լեթե տունկերը բավական զարդույն տարին—ամառը, լեթե տունկերը կմնանան, չորրորդ տարին ըստ աչքապատվաստները կմնանան, չորրորդ տարին նրանց ետում են այնպես, վոր ստացվի լավ պսակ, և աշնանը կամ գարնանը հողից հանում են և ծախում:

Այսպիսով տնկարանում ստացվում են.

1. Մի հողամաս՝ բազմացման բաժանմունք՝ ցանքսի, անդալիզի և կտրոնների ծիլերով:
2. Մի հողամաս՝ միամյա պատվաստականներով:
3. » » միամյա պատվաստով:
4. » » յերկամբա պատվաստով:

ԱՇԽԱՌԱՆՔՆԵՐԸ ՏՆԿԱԲԱՆՈՒՄ

| բաժանմունք. ցանքի մարգեր

Ցանքսի առաջին տարին ամբողջ ուշագրությունը պետք ե զարձներ, վոր տունկերը լավ, իիտ ճյուղ փափորված արմատներ ստանան Ծիրանին, զեղձենին, սալորենին իրենք իրենց լավ արմատներ են կազմում, ուստի անհրաժեշտ ե միայն ջրել (այնտեղ, վորտեղ հարկավոր ե) և փիրացնել հողը: Խնձորենին և առանձնաւպես տանձենին սովորաբար չեն տալիս ճյուղագրված արմատներ, այլ պատճառով նրանց սաղագրված արմատներ, յերբ յերեւմ են ծիլերի 2 ծիլում են: Դրա համար, յերբ յերեւմ են ծիլերի 2 սալինական տերեկիները, հանում են հողից, կտրում են արմատները յերկարության կեսից և տնկում նոր պարզում: Այդ աշխատանքը լավ կլինի կատարել ամ-


պամած լեղանակին կամ յերեկոյան, վորպեսզի նոր տնկած քնքուշ ճյուղերը չչորանան, Վերատնկումից անժիջապես հետո անհրաժեշտ է մարզերը ջրել և լավ կլինի նույնիսկ նրանց վրա վորեն կերպ շվաք աներ: Եաւ շուկ և քամի առօտ տեղերում խորհուրդ չեն տալիս սածիլել, վորովհետև շատ ծիլեր չորանում են: Գարնանը չսածիլած ծիլերի արմատներն ուժեղ կերպով կտրում են վերատնկման ժամանակ՝ աշնանը կամ հետեւյալ գարնանը:

Գործնական աշխատանքներ

1. Հողը 2 բան խորությամբ փորեցեք և պատրաստեցեք մարզեր:
2. Ցանած մարզերից զգուշությամբ փորեցեք հանեցեք 2-4 տերեւ ունեցող ծիլերը և զգուշությամբ մատներով բոնելով տերեներից՝ կարեցեք կամ սլոկեցեք արմատիկը յերկարություն կիսից:
3. Նոր պատրաստված մարզում ցցափայտով շարքով փոսիկներ արեք:
4. Զգուշությամբ ծիլերի արմատներն իջեցրեք այդ փոսիկների մեջ այնպես, վոր առաջին տերեկները պատկեն հողի յերեսին:
5. Ապա խնամքով արմատի շուրջը հող լցրեք և մատներով պնդացրեք, վորպեսզի ծիլերը հողից դուրս չգան:
6. Լավ ջրեցեք:
7. Աշնանը գանդեցեք-հանեցեք և իրար հետ համեմատեցեք սածիլած և չսածիլած տունկերի արմատներն ու շիվերը:

II Բաժանմունք


Ցանքսից մեկ տարի հետո տունկերը հանվում և տնկվում են տնկարանում: Վարովհետև տնկարանում տնկիները մնում են 3 տարի, իսկ այդ ժամանակվա ըսթացքում նրանց արմատները թափանցում են հողի ավելի խոր շերտերը, ուստի անհրաժեշտ և հողը լավ և խորը փխրացնել: Դրա համար սովորաբար անում են այսպես կոչված հիմնաշրջում: Հիմնաշրջման զեպքում հողը փխրացնում են այնպես, վոր նրա վերին շերտն ընկնի ներքե, իսկ ներքեինը բարձրանա վեցրեւ ժամար փորում են ցանկացած խորությամբ մի առնւ (տնկարանում բավական ե, վոր լինի 50-60 սմ. խորությամբ): Ապա այդ առվին զուգահեռ սկսում են փորել նույն լայնության և խորության յերկրորդ առու և զբանից դուրս լիկած հողը լցնում են առա առուն և առաջի մեջ: Այդ ձևով յերկրորդ առվի հողի վերին ջին առվի մեջ: Այդ ձևով յերկրորդ առվի հողի վերին շերտն ընկնում է առաջին առվի հատակը, իսկ ներշերտն ընկնում է առաջին հողի հատակը:



Նկ. 15. ա) Հողի հիմնաշրջում. առաջին առուն:

Քին շերտը՝ յերեսին: Ապա այդ ձևով փորում են յերեսին շերտը՝ յերեսին: Ապա այդ ձևով փորում են յերեսին շերտը՝ յերեսին: Ապա այդ ձևով փորում են յերեսին շերտը՝ յերեսին:

բայց նրա մեջ ել լեցնում են առաջին առվից հաճած հողը (տես նկ. № 15). Հիմնաշրջումը սովորաբար կատարում են տնկումից միքանի ամիս առաջ, վորպեսզ պի այդ ժամանակվա ընթացքում հողը միքիչ նստիւ Ամենից լավն ե հիմնաշրջումը կատարել աշնանը. այդ



Նկ. 15. Բ. գ) Յերկրորդ առվի հիմքի շերտն ածել են առաջին առվի յերեսին:

դեպում անձրևները և ձմռան ջրերը խորը կերպով կթափանցեն հողի մեջ: Ցրտի և ողի աղղեցությունից հողը կլափանա Գարնանը պատրաստում են մարգեր և տնկում են: Յեթե շրջանը դեմք յի, կարելի յե մարգեր չանել, այլ պարզապես շարքերով տնկել:

Գործնական աշխատանիներ

ա. Հիմնաշրջումներ

1. Վերցրեք լավ բաներ, թիեր, քլունկներ և 2 հատ հողամասի լայնության չափ շաքարաթեր:

2. Պատրաստեցրեք 2 չափափակու, մեկը 50 սմ. մեռւսը մեկ մետր յերկարությամբ:

3. Զգեցրեք թելը հողամասի յեզերքից ըստ լայնության, չափեցրեք յեզերքից մեկ մետր և ձգեցրեք թելը:

4. Սկսեցրեք փորել առուն յերկու թելերի միջև, հողի վերին շերտը հեռու գցեցրեք, վորպեսզի չխառնվի ներքենի հետ:

5. Յերբ առվի ամբողջ յերկարությամբ կլինի 50 սմ. խորություն, տեղափոխեցրեք թելը յեզերքից մեկ մետր և առաջինին զուգահեռ սկսեցրեք փորել յերկրորդ առուն՝ հողը թափելով առաջին առվի մեջ և այսպես շարունակաբարու:

6. Վերջին առվի մեջ բերեք-լցրեք առաջին առվից հանած հողը:

7. Աշխատանքի ժամանակ ջոկեցրեք-հեռացրեք խոշոր քարերը, արմատները և այլն: Յեթե հողամասը հարթ չէ, խարակով հող բերեք և լցրեք խորդուբորդ տեղերը:

բ. Պայրակների սեկելը

1. Վերցրեք բաներ, թել հողամասի լայնության կամ մարգի յերկարության չափ, թելի վրա նշան-ներ արեք ամեն մի 40 սմ. հեռավորության վրա, պատրաստեցրեք նաև մեկ չափափակու 80 սմ. յերկա-րությամբ:

2. Փորեցեք-հանեցեք անցյալ տարվա տնկիները
 3. Բաժանեցեք ըստ տեսակների. ջոկեցեք լավ
 զարգացած արմատներ ունեցողները, վորոնց ցողունի
 հաստությունն արմատին մոտիկ
 տեղում 4 մմ.-ից պակաս չինի
 (տես նկ. № 16 ա):


4. Հողամասի լախությամբ
 ծալրից պինդ ձգեցեք թելլ, թելի
 լեռկարությամբ փորեցեք 25-30
 սմ. խորությումը առու: Թելլ
 պետք է հասնի առվի պատի հենց
 լեզերքին, և առվի այդ պատը
 պետք է լինի կատարելապես
 ուղղահայաց:

5. Վերցրեք տնկիները և
 սուր սեկատորով կամ դանակով
 կարճացրեք նրանց արմատներն
 այսպես, վոր միա 7-10 սմ. լեռ-
 կարության (տես նկ. № 16 բ):


6. Դուլլի մեջ ջրով խառնե-
 ցեք կավը կովի թարս աղբի հետ
 այսպես, վոր ստացվի մածունի
 խտությամբ մի շաղախ:

7. Թաթախեցեք տնկիների
 արմատները զրա մեջ:

8. Լավ զննեցեք տնկին, նկ. 16. ա) Միաժա լավ
 ուշադրություն դարձրեք արմատ- պատվաստակալ. բ) մի-
 ների և ցողունի գույներիվը. ձատներն ու վոստը կար-
 նշանակեցեք այն տեղը, վորտեղ ճացնելուց հետո
 փոխվում է գույնը. այդ տեղը կոչվում է արմատավզիկ:



9. Տնկիները դըեք թելի վրա արված նշանների
 մոտ:



Նկ. 17. Պատվաստակալների դասավորումը տնկարանում:

10. Տնկին դըեք առվի պատին այնպես, վոր ար-
 մատավզիկը միա հողի բերնին:
 11. Ծածկեցեք արմատները հողով:

12. Վոտքով թեթև կերպով պնդացրեք հողը
տնկու շուրջը:

13. Այս ձեռվ տնկեցիք ամբողջ շարքը, բոլորը
վերջնականապես հողով ծածկեցիք և առուն հավասա-
րեցրեք:

14. Զափեցեք 80 սմ. և տնկեցեք հիտեյալ շար-
քը: Յերկրորդ շարքը տնկելիս տնկիներն այնպես դա-
սավորեցեք, վոր նըանց ամեն մեկն ընկնի առաջին
շարքի յերկու տնկիների արանքը: Այս ձեհ տնկելը
կոչվում է օախմատանատ (տես նկ. № 17): (Բացա-
տրեցեք՝ ինչու ի՞ն այդպես տնկվում):

15. Տնկելուց հետո տնկիների ծայրերը սեկա-
տորով կտրեցեք: (Բացատրեցեք՝ ինչու համար ե ալդ
արվում):

16. Լավ ջրեցեք:

17. Աճառվա ընթացքում քաղհանեցեք, ջրեցեք
ըստ կարիքի և ամեն անդամ ջրելուց հետո փիսրաց-
րեք հողը:

III Բաժանմունք. Պատվաստ լեզ պսակի կազմելը

Ցեթե տնկելու համար վերցրած եյին լավ վայ-
րակներ և լավ են խնամված, ապա հենց այդ ամառը
վաստելու ամենահեշտ և հարմար ձեւը համարվում է
աչքապատվաստը: Աչքապատվաստ են անում հուլիսի
վերջից մինչև սեպտեմբերը: Աչքապատվաստի ժամա-
նակ՝ ամենազլիսավորն այն ե, վոր կեղեց հեշտ բա-
ժանվի փայտանյութից դրա համար աչքապատվաս-
տիսց միքանի որ առաջ վայրակները լավ ջրում են և
փիսրացնում են հողը, վորպեսզի վայրակները լինեն

ավելի հյութալի: Աչքապատվաստը կատարում են հենց
հողին մոտիկ տեղում վալրակի հյուսիսալին կողմից,
հողին մոտիկ տեղում վալրակի հյուսիսալին կողմից,
հողին մոտիկ տեղում վալրակի հյուսիսալին կողմից,




Նկ. 18. Վայրակներ նախքան ներքեմի գոստերը կտրելը
և կտրելուց հետո:

կում են, վորպեսզի չխանգարեն աշխատանքի ժամա-
նակ (տես նկ. № 18):

Վալրակների շիփերի մի մասը կտրում են, վոր-
պեսզի կանգնեցնեն աճումը, և սննդահյութերն ուղղ-
վեն դեպի պատվաստը: Տաս որից հետո ստուգում են:
վեն դեպի պատվաստը են, և չբռնածներին նորից պատ-
րողին արգելոք բռնել են, և չբռնածների կապերը պոկում են
վաստում են: Հաջող բռնածների կապերը պոկում են
և նորից են կապում ավելի ապատ:
Հետեյալ գարնանը, մինչև աչքերի բացվելը,
բոլոր հաջող պատվաստված տնկիները կտրում են:

Թողնելով պատվաստից վերև 10 սմ. լեռկարությամբ մի կտոր—չոփ, զոփի վրայի բոլոր աչքերը պոկում են, վորպեսզի պատվաստված աչքը զարգանայ հակառակ դեպքում կզարդանան չոփի վրայի աչքերը, և պատ-



Նկ. 19. Չոփին կապած միամյա աչքապատվաստ:

վաստված աչքը կամ բոլորովին կշորանա կամ շատ և կդառնա 15-20 սմ., նրան կապում են չոփին ճլոպով նկ. 19): Կապում են 8-ի նման, ինչպես այդ ցույց չոփին: Ողոստոսի սկզբին սուր դանակով չոփը կըտ-


րում են հենց պատվաստին մոտիկ տեղից (տես նկ. № 19, 20): Աշնան վերջին վերքը կլավանու: Շատ շոգ տեղերում կարելի յէ վերքերին քսիլ ճածիկ, վորպեսզի պատվաստակալը չչորանա: Մեկ ամառվա ընթացքում լավ խնամքի դեպքում



Նկ. 20. ա) ինչպիս չոփառք
ե կորել բ) ինչպիս պետք
ե կորել

պատվաստացուն կկարողանա
լավ մեծանալ աճել և յերբեմն
նույնիսկ սկսում ե ճյուղա-
կալել:


Հետեւալ գարնանը մինչև
ըողբոջնիրի բացվելն սկսում են
ծառի պսակը կազմել: Վորպեսզի
ծառը լավ բերք տա, և վորպեսզի
ստացվեն խոշոր, գեղեցիկ պտուղ-
ներ, անհրաժեշտ ե, վոր ծառի նկ. 21. Յերկամյա պրա-
պսակի ներսն ազատ կերպով կավոր պատվաստ տե-
մանեն ոլ, լույս և տաքություն, բամբակից հետո:
Իսկ վորպեսզի ողը, լույսը և տաքությունը հավասա-



Նկ. 19. Չոփին կապած միամյա աչքապատվաստ

վաստված աչքը կամ բոլորովին կշռանա կամ շատ թուլ կմնա: Յերբ աչքից գուրս յեկած շիվը կերկարի և կդառնա 15-20 սմ., նրան կապում են չոփին ճլոպով կամ ոաֆիալով, վորպեսզի քամուց չկոտրվի (տես նկ. № 19): Կապում են 8-ի նման, ինչպես ալդ ցույց ե տրված նույն նկարի վրա, վորպեսզի շիվը չքսվի չոփին: Ողոստոսի սկզբին սուր դանակով չոփը կըտ-


րում են հենց պատվաստին մոտիկ տեղից (տես նկ. № 19, 20): Աշնան վերջին վերքը կլավանա: Շատ շոգ տեղերում կարելի յէ վերքերին քսիլ մածիկ, վորպեսզի պատվաստակալը չչորանա: Մեկ ամառվա ընթացքում լավ խնամքի դեպքում



Նկ. 20. ա) ինչպես չպետք
ե կտրել բ) ինչպես պետք
ե կտրել

պատվաստացուն - կկարողանա
լավ մեծանել աճել և յերեմն
նույնիսկ սկսում ե ճյուղա-
կալել:

Հետեւալ գարնանը մինչև
բողբոջների բացվելն սկսում են
ծառի պսակը կազմել: Վորպեսզի
ծառը լավ բերք տա, և վորպեսզի
ստացվեն խոշոր, գեղեցիկ պտուղ-
ներ, անհրաժեշտ ե, վոր ծառի
պսակի ներսն աղատ կերպով կավոր պատվաստ տե-
մոնեն ող, լույս և տափություն: բևաթափից հետո:
իսկ վորպեսզի ողը, լույսը և տափությունը հավասա-



Նկ. 21. Յերկամյա պսա-
պսակի ներսն աղատ կերպով կավոր պատվաստ տե-
մոնեն ող, լույս և տափություն: բևաթափից հետո:
իսկ վորպեսզի ողը, լույսը և տափությունը հավասա-


րաչափ թափանցեն, անհրաժեշտ է, վոր ծառի բոլոր ճյուղերը նայեն տարբեր կողմեր, իրար շվաք չանեն, իրար չքավեն և իրար հետ չխաչվեն (տես նկ. № 21): Յեթե մենք վեցնենք վորեւե ծառի միամյա շիվը և նայենք, թե ինչպես են դասավորված աչքերը, ապա կը-տեսնենք, վոր իրար հետեւող 5 աչքից լուրաքանչու-
րը նայում ե տարբեր
կողմ, իսկ վեցերորդը
գալիս ե առաջինի վրա
և նայում ե միենուէն
կողմը: Այսպիսով, թե-
թե մենք այդ հինգ
աչքերից շիվեր ստա-
նանք, ապա նըանք
բոլորն ուզզված կլի-
նեն տարբեր կողմեր
և իրար շվաք անել ու
խանգարել չեն կարո-
ղանա:

Այդպիսի պսակ
նկ. 22. Պատվաս- ստանալու համար սո-
սու կտրելը՝ պատկ վորաբար աբսուս ևն
կաղմելու համար վարվում: Միամյա
պատվաստակալի վրա
գետնից սկսած չափում են մեկ
մետր, ալդ մետրից վերև հաշվում են
աչքերը և վեցերորդ աչքից վերև
չափում են ելի 10 սմ., մնացած բո-
լորը կտրում են (տես նկ. № 22).
վերին 10 սմ. տարածության վրա



Նկ. 23. Յերկամյա
պատվաստ ցույց և
տրված, թե ինչպես
պիտի կարձացնել
ներքի շիվերը

պոկում են բոլոր աչքերը: Վերին 6 աչքից աճում են
ուժեղ շիվեր, վորոնցից կազմում են պսակը (տես նկ.
№ 23): Ամենավերին, վեցերորդ շիվը, յերե նա կհանի
15-20 սմ. յերկարության, կապվում է չոփին, վորպես-
կի ուզիկ դեպի վեր աճի և գառնա բնի շարունակու-
թիւնը: Վերին 6 շիվերից ներքին աճող շիվերը 5-10
թիւնը: Վերին 6 շիվերից նըանց ծալրերը կտրում են,
սմ. գառնալուց հետո նըանց ծալրերը կտրում են,
սմ. վորպեսզի ալլեւ չմեծանան (տես նկ. № 23): Ազո-
վորպեսզի ալլեւ չմեծանան (տես նկ. № 23): Ազո-



Նկ. 24. Յերկամյա պատվաստներ անկալ աճում ամառվա վերջին:

տոսին սուր գանակով նըանց ամբողջովին կտրում են:
չենց այդ ժամանակ ել կտրում են այն չոփը, վորին
կապված եր վերին շիվը: Իսկ ինչու համար են թող-
կապված ներքին շիվերը մինչև ամառվա կեսը, նրա հա-
մար, վորպեսզի սնունդ հասցնեն ջահել բնին և դարձը-
նեն նըան ավելի հաստ և ամուր (տես նկ. № 24):

Նույն տարվա աշնանից կամ հետեւալ տարվա
վարնանից ծառերը կարելի յեւ արդեն հանել և տնկու

մշտական տեղում: Յեթե ծառերն այս կամ այն պատճառով թուցի են զարգացել լավ պսակ չի ստացվել, այն ժամանակ նրանց թողնում են տնկարանում և մեկ տարի: Տնկարանից բաց թողնված ծառը պետք է ունենա 5-6 լավ զարգացած ճյուղ և խիտ ու առողջ արմատներ:

Գործնական աշխատանքներ

ա) 1. Վաղ զարնանը շրջեցեք և նայեցեք անցյալ տարվա բոլոր պատվաստները, հաշվեցեք՝ վ՞ո՞ր տոկոսն և հաջող բռնել:

2. Թանդեցեք կապերը:

3. Սուր սեկատորով կտրեցեք վայրակի պատվաստված տեղից 10 սմ. վերև:

4. Դրանից առաջանալիք չոփի վրայի բոլոր աչքերը պոկեցեք:

բ) 1. Պատրաստեցեք մեկ մետրաչափ փայտ:

2. Ուժեղ միամյա պատվաստակալների վրա չափեցեք մեկ մետր հողի յերեսից վեր:

3. Մեկ մետրից վերև հաշվեցեք 6 աչք. դիտեցեք՝ ինչպես են նրանք դասավորված:

4. Վեցերորդ աչքից վերև չափեցեք 10 սմ., պոկեցեք նրա վրայի բոլոր աչքերը:

5. Այդ 10 սմ.-ից վերև յեղածը կտրեցեք:

գ) 1. Աշնանը կամ զարնանը տնկարանում հանեցեք բոլոր լավ պսակ ունեցող ծառերը:

2. Զոկեցեք լավ զարգացած ճյուղեր և արմատներ ունեցողները մշտական տեղում տնկելու համար:

3. Մնացածը նորից տնկարանում տնկեցեք:

դ) Յերբ բոլոր աչքերը կմիծանան և շիվերը կդառնան 10-15 սմ.,

1. Անցյալ տարվա աչքապատվասաը կապեցեք չոփին ութաձև:

2. Պսակ կազմվելու նպատակով կտրված պատվաստակալի վերին ճյուղը կապեցեք չոփին ութաձև:

3. Նույն ծառերի ցողունի վրա վերևի 6 աչքից նկը բանակ աճած շիվերի մայլերը կապեցեք (նկ. № 24):

ՀԱՐՑԵՐ ՑԵՎ. Ա.Ա.ՉԱՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ

1. Ջեր շրջանում տնկարան կմա:

2. Վարտեղից են վերցնում տնկեներ այժմ և վերտեղից եյին վերցնում առաջ:

3. Իրենք գուղղացիները տնկիներ մեծացնեմ են թե վոչ:

4. Յեթե այս, ապա ի՞նչպես (պատվաստում են անտառի կամ այգու մացաներից):

5. Ի՞նչ ձևով են պատվաստում:

6. Ի՞նչ խնամք են տանում պատվաստելուց հետո:

7. Պսակի կազմվելու վրա ուշադրություն դարձնեմ են:

8. Յեթե շրջանում տնկարան կա, այցելեցիք և մանրամասն ծանոթացեք աշխատանքների հետ:



ՀԱՅ-ԱՐՄ. ՀՀՊ
Ո. ՄԱՅԱԿԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0280805



19.941

Ա. ВЕРМИШЯН

Руководство по плодо-
водству

1
2



ԳՐԱԿ 15 ԿՈՊ.